ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԻ Փ.
87ա
Իրավաբանական վարչության ՀԳ և ՊԿԱ բաժին Ալեքս
Բաբայան
Ծանուցագիր

ՀԱՍՈՒՅԹ ՀԱՆՁՎԱԾ Tax percue

L0112001736AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ CN15
RETURN

- [ ] Անհայտ/ Unknown
- [x] Տեղափոխված/ Gone away
- [ ] Թերի հասցե/ Insufficient address
- [ ] Մերժված / Refused
- [ ] Չի պահանջվել/ Unclaimed
- [ ]

Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date 4.11

ARMENIA YEREVAN 03 NOV 2023 0008

Արկադի Սահակյան
Armenia ԱՐԱԳԱԾՈՏՆ ԱՊԱՐԱՆ(ՇԵՆԱՎԱՆ) 20 Փ. 18

powered by Envelope, envelope.haypost.am

Հավելյալ Նշում 1՝ Իրավաբանական վարչության ՀԳ և ՊԿԱ բաժին Ալեքս Բաբայան
Հավելյալ Նշում 2՝ Ծանուցագիր

powered by Envelope, envelope.haypost.am

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԻ Փ.
87ա
Իրավաբանական վարչության ՀԳ և ՊԿԱ բաժին Ալեքս
Բաբայան
Որոշում

ՀԱՍՈՒՅԹ ՀԱՆՁՎԱԾ Tax percue

L0115557597AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ CN15
RETURN

- [ ] Անհայտ/ Unknown
- [x] Տեղափոխված/ Gone away
- [ ] Թերի հասցե/ Insufficient address
- [ ] Մերժված / Refused
- [ ] Չի պահանջվել/ Unclaimed
- [ ]

Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date 10.12

ARMENIA YEREVAN 29 NOV 2023 0008

Արկադի Սահակյան
Armenia ԱՐԱԳԱԾՈՏՆ ԱՊԱՐԱՆ(ՇԵՆԱՎԱՆ) 20 Փ. 18

powered by Envelope, envelope.haypost.am

Հավելյալ Նշում 1՝ Իրավաբանական վարչության ՀԳ և ՊԿԱ բաժին Ալեքս Բաբայան
Հավելյալ Նշում 2՝ Որոշում

powered by Envelope, envelope.haypost.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«29» նոյեմբեր 2023թ. ք. Երևան, Ս. Դավթի 87Ա

ՈՐՈՇՈՒՄ N_ 903-Ա

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս քննարկելով ֆիզիկական անձ Արկադի Յուրիկի Սահակյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ N61/2022/4ՈՒՎ4/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ Արկադի Յուրիկի Սահակյանի (Արագածոտն, Շենավան 20փ. 18, անձնագիր՝ AT0419450, ՀՎՀՀ՝ 54719357) չկատարված հարկային պարտավորությունը 14.01.2022թ. դրությամբ կազմել է 31193 դրամ, որից հարկ 30522 դրամ, տույժ՝ 671 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 03.11.2023թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների համաձայն ֆիզիկական անձի կողմից 16.10.2021թ. ԵԱՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք են ներմուծվել ապրանքներ, ինչի արդյունքում գերազանցվել է ՀՀ կառավարության 2020թ փետրվարի 13-ի «ՀՀ օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից ՀՀ ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակներն ու ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ» թիվ 171-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված ակնհայտ առևտրային չափաքանակները:

Ֆիզիկական անձը ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 59-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ պարտավոր է ՀՀ կառավարության 2020թ. թիվ 171-Ն որոշմամբ սահմանված չափաքանակը գերազանցող մասի համար Օրենսգրքի 77-րդ և 78-րդ հոդվածների համաձայն՝ հարկային մարմին ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր և վճարել արդյունքում առաջացող ներմուծման ավելացված արժեքի հարկը՝ մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի և 61-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետությունից ՀՀ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքը, արդյունքում Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ԱԱՀ-ն կհաշվարկվի 20 տոկոս դրույքաչափով:

Ֆիզիկական անձ Արկադի Յուրիկի Սահակյանի կողմից իրականացված վերը նշված գործարքի մասով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել ներմուծման հարկային հայտարարագիր և չի կատարվել հարկերի վճարումը:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը ներմուծման ԱԱՀ-ի մասով կազմում է 31193 դրամ, որից հարկ 30522 դրամ, տույժ՝ 671 դրամ, որն առաջացել է ֆիզիկական անձի կողմից կատարած ներմուծման գործարքի արդյունքում, ինչպես նաև հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից:

0015, Երևան, Ս. Խորենացի 3/7 հեռ. +374 60 84 46 57

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ֆիզիկական անձ Արկադի Յուրիկի Սահակյանից գանձել 31193 դրամ պարտավորության գումար, ինչպես նաև սույն որոշման կատարման օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերը համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

14.01.2022թ-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Ներմուծման ԱԱՀ	22.11.2021թ.	30522	671		31193	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ծառայություն:
3. Որոշման օրինակն եռօրյա ժամկետում ուղարկել ֆիզիկական անձին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին, կամ վերադաս վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄԵԼՔՅԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. անձի կամ նրա անձի անուն ազգանուն ամսաթիվ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Կատարող՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության
հարկադիր գանձման և պարտավորությունների
կատարման ապահովման բաժնի
այլ քաղաքացիական աշխատանքների մասնագետ
Ալեքս Բաբայան հեռ.010-30-91-91 /91-37/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«10» 11 2023թ.
No 111-4167672-2023

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

ՀԱՍՑԵ՝ Ք. ԱՊԱՐԱՆ, ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ Փ",26 Շենք
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ՝ aparan.aragatsotn@mta.gov.am

Հարգելի պարոն Եղիազարյան

Տեղեկացնում եմ, որ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչությունում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն ստորև ներկայացված ցանկում նշված ֆիզիկական անձի վերաբերյալ հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարած հարկային պարտավորությունները գանձելու մասին Օրենքի 7-րդ գլխով սահմանված կարգով վարչական ակտ ընդունելու նպատակով:

	Ա.Ա.Հ.	Անձնագիր	ՀԾՀ	ՀՎՀՀ	հասցե
	Արկադի Սահակյան Յուրիկի	AT0419450		54735197	Արագածոտն, Շենավան 20փ. 18

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 29.1 հոդվածի 14-րդ մասի 1-ին կետի կարգավորումներով, Ձեզ է ներկայացվում ցանկում նշված ֆիզիկական անձին

0015, Երևան, Մ. Խորենացի 3/7 հեռ. +374 60 84 46 57

հասցեագրված ծանուցագիրը, հաշվի առնելով, որ վերջինիս ուղարկված ծրարը հետ է վերադարձվել «Տեղափոխված» նշագրումով:

Առդիր՝ 1 էլեկտրոնային ֆայլ:

11/10/2023

X

ՆԱԻՐԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: AVANESYAN NAIRA 5604700010

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԱԻՐԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության
հարկադիր գանձման և պարտավորությունների
կատարման ապահովման բաժնի
այլ քաղաքացիական աշխատանքների մասնագետ
Ալեքս Բաբայան հեռ.010-30-91-91 /91-37/

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական կայք

Հայտարարությունների առցանց ընդունում

Ձեր հայտարարությունը ընդունված է:
Ձեր հրապարակային ծանուցման
նույնականացման համարն է **1403764**:
Տպեք կամ պահպանեք այն:

Երևան, Ս.Դավթի 87Ա «03» նոյեմբեր 2023թ.

Քաղաքացի՝ Արկադի Սահակյանին

Հասցե՝ Արագածոտն, Շենավան 20փ. 18

Անձնագիր՝ AT0419450, ՀՎՀՀ՝ 54719357

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Սույն ծանուցագրով դուք տեղեկացվում եք, որ համաձայն մաքսային մարմնի կողմից ստացված տեղեկությունների Ձեր կողմից 16.10.2021թ. ՀՀ տարածք է ներմուծվել ապրանքներ, ինչի արդյունքում գերազանցվել է ՀՀ կառավարության 2020թ փետրվարի 13-ի թիվ 171-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված ակնհայտ առևտրային չափաքանակները:

Դուք ՀՀ հարկային օրենսգրքի 59-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն պարտավոր եք ՀՀ կառավարության 2020թ փետրվարի 13-ի թիվ 171-Ն որոշմամբ սահմանված չափաքանակը գերազանցող մասի համար հարկային մարմին ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր և ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման մասին ներմուծողի լրացրած հայտարարություն ու վճարել ավելացված արժեքի հարկ՝ մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող 20-ը ներառյալ, ինչը Ձեր կողմից չի իրականացվել:

Հարկային պարտավորությունների հաշվարկման վերաբերյալ թիվ 61/2022/ԿՈՒՎ4/Ա արձանագրության համաձայն՝ Ձեր չկատարված հարկային պարտավորությունը 14.01.2022թ. դրությամբ կազմել է 31193 դրամ, այդ թվում հարկ՝ 30522 դրամ, տույժ՝ 671 դրամ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի համաձայն, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 7-րդ գլխով սահմանված կարգով վարչական ակտ ընդունելու նպատակով:

Ուստի, ի կատարումն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 29.1-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների, առաջարկում ենք սույն ծանուցագիրը ստանալու օրվան հաջորդող 3-րդ օրը, ժամը 11:00 ներկայանալ վարչական վարույթի լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և <կամ> առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս.Դավիթ 87ա, 4-րդ հարկ 403 սենյակ:

Եթե սույն ծանուցագիրը ստանալու օրվան հաջորդող 3- րդ օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վարչական վարույթի լսումներին ներկայանալ հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ժամը 11:00 կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և <կամ> առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս.Դավիթ 87ա, 4-րդ հարկ 403 սենյակ: Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

Միաժամանակ առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկել և հարկային մարմին ներկայացնել գործարքին վերաբերող հարկային հաշվարկը և վճարել պարտավորությունները:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԵՌԱԽՈՍ՝ 010-30-91-91
ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱՐ՝ 91-27

Ալեքս Բաբայան

Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2019թ. հուլիսի 18-ի թիվ 480-Լ հրամանի

Ձև

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 61/2022/ԿՈՒՎ4/Ա

ք. Երևան 14/01/2022

1. Արկադի Սահակյան ՀՎՀՀ 54719357
(հարկային իրավախախտումը կատարած անձի անունը, ազգանունը)

2. Արագածոտն, Շենավան, 20 փող. 18
(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)

3. AT0419450
(ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և/կամ/ հանրային ծառայությունների համարանիշը)

4. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել

ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների համաձայն՝ Ձեր կողմից 16.10.2021թ.-ին ԵԱՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք է ներմուծվել ապրանքներ՝ ընդամենը **26,000 ռուսական ռուբլի** (համարժեք 174,720 ՀՀ դրամ) ինվոյսային արժեքով.

Ապրանքի ծածկագիր	Ապրանքի կոմերցիոն նկարագրություն	Բրուտտո քաշ	Ինվոյսային արժեք
7314490000	СЕТКА РУЛОНАХ БУ	600.00	10,000
8483908909	КРУГ ШЕСТЕРНЯ	400.00	14,000
8707109000	КАПОТ НА АВТО БУ	20.00	2,000

Վերը նշված՝ (**ԱՏԳ ԱԱ 73**՝ 25 կգ. թույլատրելի) և (**ԱՏԳ ԱԱ 8483**՝ 25 կգ. թույլատրելի) ծածկագրերին դասվող ապրանքատեսակների չափաքանակները գերազանցել են ՀՀ կառավարության 2020թ.-ի փետրվարի 13-ի «ՀՀ օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակներն ու ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ» թիվ 171-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված չափաքանակները, ուստի Դուք՝ ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 59-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ պարտավոր էիք ՀՀ կառավարության 2020թ. փետրվարի 13-ի թիվ 171-Ն որոշմամբ սահմանված չափաքանակը գերազանցող մասի համար Օրենսգրքի 77-րդ և 78-րդ հոդվածների համաձայն՝ հարկային մարմին ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր ու վճարել արդյունքում առաջացող ավելացված արժեքի հարկը՝ մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: ԱԱՀ-ով հարկման բազայի հաշվարկման համար հիմք են հանդիսանում Օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները, որոնք որոշվում են համապատասխանաբար ապրանքը ՀՀ տարածք

ներմուծելու (ՀՀ պետական սահմանը հատելու) կամ ապրանքը ՀՀ-ից արտահանելու (ՀՀ պետական սահմանը հատելու) ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից, որպիսին հանդիսանում է տվյալ օրվան նախորդող օրը հրապարակված միջին փոխարժեքը:

5. Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը

Ֆիզիկական անձ Արկադի Սահակյանի կողմից իրականացված վերը նշված ներմուծման գործարքի մասով հարկային մարմին չի ներկայացվել ներմուծման հարկային հայտարարագիր և չի վճարվել ներմուծման ԱԱՀ-ի գումարը, նման պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի և 61-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետությունից ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում՝ ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանք(ներ)ի ձեռքբերման արժեքը՝ ընդամենը **152,612 ՀՀ դրամ**, որից **64,412 ՀՀ դրամ** [10,000 / 600 x [600 - 25] x 6.72 /փոխարժեք/] և **88,200 ՀՀ դրամ** [14,000 / 400 x [400 - 25] x 6.72 /փոխարժեք/]:

Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ներմուծման ԱԱՀ-ն հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ 20 տոկոս դրույքաչափով՝ **30,522 ՀՀ դրամ** [152,612 x 20%]:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ **671 ՀՀ դրամ** (14/01/2022թ. դրությամբ) [30,522 x 55օր x 0.04%]:

Այսպիսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը առ 14/01/2022թ. դրությամբ կազմում է՝ **31,193 ՀՀ դրամ** [30,522 + 671]:

Հարկային պարտավորությունները հաշվարկվել են 14/01/2022 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

6. Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող

7. Ընդամենը՝

8. Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

ՀՀ ՊԵԿ ՀՏՌՎ վարչության ԿՈՒՎ թիվ 4 բաժնի ավագ հարկային տեսուչ Լիլիթ Բաբայան